**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

## 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-ԻՆ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ-ՆԵՐԻ՝ ԱՆՁԱՆՑ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՀԵՏԱԽՈՒԶՄԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱ-ՆԱԳՐՈՒՄ (ԿԻՑ ՎԵՐԱՊԱՀՈՒՄՈՎ) ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ-ՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱ-ՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երեւան 7 սեպտեմբերի 2012թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուզյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի,Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի (զեկուցող),

մասնակցությամբ՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի առաջին տեղակալ Հ. Պողոսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդվածների,

դռնբաց դատական նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2010 թվականի դեկտեմբերի 10-ին Մոսկվայում ստորագրված՝ Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների՝ անձանց միջպետական հետախուզման մասին պայմանագրում (կից վերապահումով) ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության Նախագահի՝ 26.06.2012թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով քննության առարկա պայմանագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. Պայմանագիրն ստորագրվել է 2010 թվականի դեկտեմբերի 10-ին Մոսկվայում՝ ԱՊՀ շրջանակներում անձանց հետախուզման ոլորտում համագործակցության արդյունավետ մեխանիզմներ ստեղծելու նպատակով:

2. Պայմանագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետեւյալ պարտավորությունները.

- սույն պայմանագրին, ՀՀ այլ միջազգային պայմանագրերին եւ ՀՀ օրենսդրությանը համապատասխան՝ իրավասու մարմինների միջոցով համագործակցել մյուս կողմերի իրավասու մարմինների հետ անձանց միջպետական հետախուզման ոլորտում,
- երաշխավորել, որ կապահովվի ստացված տեղեկությունների գաղտնիությունը, այդ թվում՝ հարցման ստացման փաստը եւ բովանդակությունը, եթե հարցում կատարող կողմը ցանկալի չի համարում դրա բովանդակության հրապարակումը, ինչպես նաեւ գաղտնիությունն ապահովելու անհնարինության դեպքում անհապաղ տեղյակ պահել մյուս կողմին,
- ինքնուրույն կրել պայմանագրի իրականացման ընթացքում կատարված ծախսերը:

3. Պայմանագրի վերաբերյալ Ադրբեջանի Հանրապետությունը հանդես է եկել վերապահմամբ՝ բացառելով պայմանագրի դրույթների կիրառումը Հայաստանի Հանրապետության նկատմամբ, ինչի հետեւանքով Հայաստանի Հանրապետությունը, առաջնորդվելով փոխադարձության սկզբունքով, հանդես է եկել պատասխան վերապահմամբ, ըստ որի՝ բացառում է պայմանագրի դրույթների կիրառումը Ադրբեջանի Հանրապետության նկատմամբ:

4. Պայմանագրում սահմանված են նաեւ հարցումները կատարելու եւ դրանց մերժման կարգը, պայմանագրից բխող վեճերի լուծման, ինչպես նաեւ այն ուժի մեջ մտնելու եւ դադարելու կարգն ու պայմանները, որոնք համապատասխանում են ՀՀ սահմանադրաիրավական պահանջներին:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի 1-ին եւ 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

1. 2010 թվականի դեկտեմբերի 10-ին Մոսկվայում ստորագրված՝ Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների՝ անձանց միջպետական հետախուզման մասին պայմանագրում (կից վերապահումով) ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ** **Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

7 սեպտեմբերի 2012 թվականի
ՍԴՈ-1045